Որո՞նք են իմ իրավունքները որպես հանցագործության զոհ

Ոչ ոք նախապատրաստված չէ հանցագործության զոհ դառնալուն: Միևնույնն է ինչ հանցանք: Լինի դա գրպանահատություն, ծանր մարմնական վնասվածք թե մեկ այլ հանցանք: Հանցանքը մարդուն վնաս կամ խանգարում է հասցնում, որից հետո նրանք հաճախ չեն իմանում, թե ինչ պետք է անեն: Այս հուշաթերթիկը Ձեզ համար նախնական ակնարկ է հանդիսանում, թե նման իրավիճակում ինչպիսի իրավունքներ ունեք և որտեղ կարող եք աջակցություն ստանալ:

Ո՞վ կարող է ինձ օգնել

Զոհերի աջակցության կենտրոններն առաջարկում են խորհրդատվություն և աջակցություն: Խորհրդատվական կենտրոններում աշխատում են հատուկ մասնագիտացված կանայք և տղամարդիկ, որոնք մեծ փորձ ունեն Ձեր իրավիճակում գտնվող մարդկանց հետ և ուզում են Ձեզ լսել և աջակցել: Նրանք կարող են նաև միջնորդել, որ, ըստ դեպքի ծանրության, Դուք ավելի ընդլայնված օժանդակություններ ստանաք, ինչպես օրինակ՝ հոգեբանական կամ թերապևտիկ աջակցություն:

Ակնարկ այն մասին, թե ում կարող եք դիմել, կգտնեք սույն կայքում. www.bmjv.de.
Բացի այդ, Ձեզ կարող են օգտակար լինել նաև ոստիկանական բաժնում կամ հանցագործություններից տուժողների համար նախատեսված (www.odabs.org) առցանց տվյալների բազան:

Ինչպե՞ս կարող եմ հանցագործության մասին դիմում ներկայացնել և ի՞նչ տեղի կունենա դրանից հետո:

Եթե ուզում եք որևէ հանցագործության մասին դիմում ներկայացնել, ապա կարող եք դիմել որևէ ոստիկանական բաժին: Եթե ներկայացրել եք դիմում հանցագործության մասին, ապա չեք կարող այն այլևս հեշտությամբ հետ վերցնել,

քանի որ հետաքննող վարչությունները (ոստիկանությունն ու դատախազությունը) պարտավոր են հետապնդել յուրաքանչյուր հայտարարված հանցագործության:

Մայն մի քանի ոչ ծանր հանցագործությունների դեպքում, ինչպիսիք են օրինակ՝ վիրավորանքը կամ գույքի վնասումը, տուժողը կարող է որոշել, արդյոք պետք է հետապնդել հանցանքը: Այդ իսկ պատճառով այս հանցանքները կոչվում են նաև հայցային հանցանք: Այս պարագայում հանցագործությունը հետապնդվում է, որպես կանոն, միայն ըստ հայցի, այսինքն եթե Դուք, որպես հանցագործության զոհ, հստակորեն ցանկանում եք դա: Հայցը պետք է ներկայացնեք հանցագործության և հանցագործի մասին տեղեկանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

Իսկ եթե ես վատ եմ հասկանո՞ւմ կամ չեմ հասկանո՞ւմ գերմաներեն:
Հոգ չէ: Եթե ուզում եք հանցագործության մասին դիմում ներկայացնել, ապա Ձեզ կօգնեն: Եթե Ձեզ հարցաքննում են, որպես վկա, ապա իրավունք ունեք պահանջելու, որ ներգրավվի թարգմանիչ:

Ի՞նչ տեղեկություններ կարող եմ ստանալ քրեական գործի ընթացքի մասին:
Եթե Դուք որևէ հանցագործության զոհ եք դարձել, ապա միշտ չէ որ ինքնաբերաբար տեղեկություններ եք ստանում քրեական գործի ընթացքի մասին: Դուք պետք է ոստիկանությունում անմիջապես հայտնեք, արդյոք ուզում եք տեղեկություններ ստանալ և ինչպիսի տեղեկություններ եք ուզում ստանալ: Ցանկության դեպքում՝ կստանաք հետևյալ տեղեկությունները.

- Դուք կստանաք գրավոր կարճ հաստատում, Ձեր ներկայացրած հանցագործության մասին դիմումի վերաբերյալ
- Ձեզ կտեղեկացնեն, եթե դատախազությունը կարճի գործի վարույթը, այսինքն՝ գործը չհանձնի դատարան՝ դատական հետապնդման:
- Ձեզ կտեղեկացնեն, թե երբ և որտեղ է տեղի ունենալու դատական նիստը և ինչ մեղադրանք է ներկայացվում ամբաստանյալին:

- Ձեզ կտեղեկացնեն դատական նիստի արդյունքների մասին, այսինքն՝ արդյոք ազատ արձակման, կամ դատապարտման մասին դատավճիռ է ընդունվել, կամ գործի վարույթը կասեցվել է:
- Ձեզ կտեղեկացնեն այն մասին, արդյոք ամբաստանյալը կամ դատապարտյալը գտնվում է ազատազրկման մեջ:
- Ձեզ կտեղեկացնեն այն մասին, արդյոք դատապարտյալին արգելել են Ձեզ հետ կապ հաստատել:

Բացի այդ՝ կարող եք, առանձին դեպքերում, դիմում ներկայացնել գործից տեղեկություններ կամ պատճեններ ստանալու մասին: Այն կարող է ճանապարհաերթևեկային վթարից հետո, օրինակ՝ վթարի էսքիզը լինել, որը Ձեզ պետք է վնասի փոխհատուցում կամ զոհի հատուցում պահանջելու համար: Եթե Դուք իրավունք չունեք համահայց ներկայացնելու, (համահայցի մասին կարդացեք ներքևում) ապա պետք է հիմնավորեք, այսինքն բացատրեք, թե ինչու եք ուզում ստանալ գործից այդ տեղեկությունները:
Առանձին դեպքերում կարող են բացառություններ արվել:

Ձեր ցուցմունքները, որպես վկա:

Եթե հանցագործության զոհ եք դարձել, ապա որպես վկա, Դուք շատ կարևոր եք հետաքննության համար: Որպես կանոն Դուք Ձեր ցուցմունքները տալիս եք ոստիկանությունում: Շատ դեպքերում Դուք հետագայում պետք է ցուցմունք տաք նաև դատարանի առջև: Միայն բացառիկ դեպքերում, եթե օրինակ՝ Դուք մեղադրյալի հետ ամուսնացած կամ ազգական եք, իրավունք ունեք հրաժարվելու ցուցմունքներ տալուց, այսինքն պարտավոր չեք ոչինչ ասել:
Սակայն պարտավոր եք հարցաքննության ժամանակ հայտնել Ձեր անուն, ազգանունը և հասցեն: Բացառություն կարող է արվել միայն այն դեպքում, եթե առկա է հատուկ վտանգի ռիսկ: Դա կարող է լինել օրինակ այն դեպքում, եթե ինչ-որ մեկը բռնությամբ է սպառնացել Ձեզ, որովհետև Դուք ուզում եք ցուցմունք տալ: Այդ

դեպքում Դուք պարտավոր չեք հայտնել Ձեր անձնական հասցեն: Դրա փոխարեն Դուք կարող եք հայտնել մեկ այլ հասցե, որով կարող են կապ հաստատել Ձեզ հետ: Դա կարող է, օրինակ զոհերի աջակցության կենտրոնի հասցեն լինել, որի հետ Դուք կապ ունեք:

Որպես վկա ցուցմունք տալը Ձեզ համար անկասկած արտակարգ իրավիճակ է, որը կարող է շատ սթրեսային լինել: Այդ իսկ պատճառով կարող եք Ձեզ հետ բերել ինչ-որ մեկին: Դա կարող է լինել Ձեր բարեկամներից կամ Ձեր ընկերներից որևէ մեկը: Նա կարող է հարցաքննման ժամանակ ներկա գտնվել և միայն բացառիկ դեպքերում կարող են նրան հեռացնել: Իհարկե Ձեզ կարող է ուղեկցել նաև փաստաբան: Հատուկ դեպքերում՝ հարցաքննման ընթացքում Ձեզ նույնիսկ կարող է պետության հաշվին փաստաբան տրամդրվել: Եթե կարծում եք, որ հարցաքննության համար՝ լինի դա ոստիկանությունում, դատախազությունում, թե դատարանում, նման աջակցության կարիք ունեք, հարցրեք այդ մասին հարցաքննությունից առաջ հարցաքննողին, դրա հնարավորության մասին:

2017-ից սկսած:

Եթե երեխաներ կամ դեռահասներ են դարձել բռնության կամ սեքսուալ հանցագործության զոհ, ապա վարույթի ողջ ընթացքում տրվում է արհեստավարժ մասնագետի ուղեկցության և օժանդակության հնարավորություն, այսպես կոչված՝վարույթի հոգեսոցիալական ուղեկից: Առանձին դեպքերում դաժան բռնության կամ սեքսուալ հանցագործության զոհ դարձած չափահասները նույնպես կարող են նման օժանդակության կարիք ունենալ և ստանալ այն: Վարույթի հոգեսոզիալական ուղեկիցն անվճար է հանցագործության զոհի համար, եթե այն հաստատվել է դատարանի կողմից: Այդ մասին հարցրեք ոստիկանությունում կամ զոհերի աջակցության կենտրոնում: Նրանք կարող են Ձեզ օգնել:

Կարո՞ղ եմ արդյոք որպես համահայցվոր միանալ քրեական վարույթին:

Եթե Դուք որոշ հանցանքների զոհ եք դարձել, ապա կարող եք վարույթի ժամանակ ներկայանալ որպես համահայցվոր: Այդ հանցանքների թվին են պատկանում օրինակ՝ բռնաբարությունը, սեքսուալ չարաշահումը, սպանության փորձը, կամ հանցագործությունը, որը մոտիկ հարազատի սպանությանը պատճառ է դարձել: Նման դեպքերում Դուք ունեք հատուկ իրավունքներ: Դուք կարող եք, օրինակ՝ ի տարբերություն այլ վկաների, մասնակցել բոլոր դատական նիստերին:

Ո՞վ է վճարում իմ փաստաբանի ծախսերը:

Եթե Դուք օգտվում եք փաստաբանի ծառայություններից, դա կարող է Ձեզ համար ծախսեր առաջացնել: Եթե ամբաստանյալը դատապարտվում է, ապա նա պարտավոր է ստանձնել Ձեր փաստաբանի ծախսերը: Սակայն բոլոր դատապարտյալները չեն, որ ի վիճակի են իսկապես վճարելու ծախսերը: Այդ իսկ պատճառով՝ կարող է պատահել, որ դուք ստիպված լինեք ինքներդ վճարել այդ ծախսերը:

Բացառիկ դեպքերում կարող եք դատարանում դիմում ներկայացնել, որ Ձեզ տրամադրեն փաստաբան պետության հաշվին: Դա հնարավոր է օրինակ՝ ծանր բռնության կամ սեքսուալ հանցագործությունների դեպքում, կամ եթե հանցագործության պատճառով մահացել են մոտիկ հարազատներ, ինչպես օրինակ՝երեխաներ, ծնողներ, ամուսինը կամ կինը: Նման դեպքերում էական չէ, թե Դուք ունեցվածք ունեք, թե ոչ:

Այլ դեպքերում նույնպես կարող եք դատարանին փաստաբանի ծախսերի համար ֆինանսական օժանդակություն ստանալու մասին դիմում ներկայացնել: Դա կարող եք անել այն դեպքում, եթե Ձեր եկամուտը ցածր է և Դուք իրավունք ունեք վարույթին միանալ որպես համահայցվոր:

Վնասի փոխհատուցում և զոհի հատուցում

Ձեզ հանցագործության պատճառով վնա՞ս են հասցրել, կամ ցանկանում եք զոհի հատուցո՞ւմ ստանալ: Ցանկանո՞ւմ եք Ձեր պահանջը ներկայացնել քրեական դատավարության ժամանակ: Դա որպես կանոն հնարավոր է (այսպես կոչված՝ ադհեզիայի մեթոդով): Սակայն դրա համար պետք է հայց ներկայացնեք: Այն կարող եք ներկայացնել հանցագործության մասին դիմումի հետ մեկտեղ:

Իհարկե Դուք կարող եք փոխհատուցում կամ զոհի հատուցում պահանջել մեկ այլ վարույթով, այսինքն՝ ոչ թե քրեական, այլ քաղաքացիական դատարանի առաջ: Այս դեպքում նույնպես կարող եք փաստաբանական խորհրդատվության համար ֆինանսական նպաստ ստանալու դիմում ներկայացնել դատարանին, եթե Ձեր եկամուտը շատ ցածր է:

Է՞լ ինչ իրավունքներ ունեք Դուք:

Բռնության պատճառով ստացել եք առողջական վնասնե՞ր: Այդ դեպքում կարող եք, համաձայն Զոհերի հատուցման մասին օրենքի, պետական նպաստներ ստանալ, եթե օրինակ՝ խոսքը վերաբերում է բժշկական կամ հոգեթերապևտիկ բուժմանը, օժանդակ պարագաներին (օրինակ՝ քայլակ, անվասայլակ) կամ կենսաթոշակային նպաստին (օրինակ՝ եկամտի կորուստները փոխհատուցելու համար): Այդ մասին հայց կարող եք ներկայացնել արդեն ոստիկանությունում:

Եթե Դուք ծայրահեղական հարձակումների կամ ահաբեկչական հանցագործության զոհ եք դարձել, կարող եք ֆինանսական օժանդակության հայց ներկայացնել Արդարադատության դաշնային վարչություն: Այստեղ կիմանաք ավելին նախապայմանների և ընթացակարգի մասին. www.bundesjustizamt.de/ (փնտրման բառը Härteleistungen/Opferhilfe (նպաստ ծանր դեպքերի համար, աջակցություն տուժողներին)):

Որպես տնային բռնության զոհ Դուք հավանաբար այլ իրավունքներ ունեք՝ համաձայն Բռնությունից պաշտպանության մասին օրենքի: Օրինակ՝ Դուք կարող եք ընտանեկան դատարանում հայց ներկայացնել այն մասին, որ հանցագործին

արգելվի կապ հաստատել Ձեզ հետ: Հատուկ դեպքերում՝ դատարանը կարող է Ձեզ թույլ տալ, որ բնակարանը, որտեղ մինչ այդ հանցագործի հետ միասին եք ապրել, այժմ օգտագործեք միայն Դուք: Անհրաժեշտ դիմումները կարող եք կամ գրավոր ներկայացնել Շրջանային դատարան կամ Ձեր դիմումն այնտեղ գրանցել տալ: Պարտադիր չէ, որ Ձեզ ներկայացնի որևէ փաստաբան:

Ինչ է հանցագործի և զոհի հաշտեցումը

Այսպես է կոչվում այն ընթացակարգը, որը նախ և առաջ պետք է հանցագործության զոհին օգնի հաղթահարել իր կրած անարդարությունը: Ի տարբերություն սովորական քրեական վարույթի, այս դեպքում հանցագործը պետք է կոնկրետ զբաղվի այն հարցով, թե իր կատարած հանցանքն ինչ վնասներ է հասցրել տուժողին: Այն կարող է վերաբերվել նյութական վնասներին, որը տուժողը կրել է հանցագործության պատճառով, կամ հոգեկան վնասներին, անձնական վիրավորանքներին և հանցագործության հետևանքով առաջացած վախերին: Հանցագործի և տուժողի միջև հաշտեցման ընթացակարգը երբեք տեղի չի ունենում հակառակ զոհի կամքի և միայն այն դեպքում է կատարվում, եթե հանցագործը լրջորեն կամենում է ստանձնել հանցագործության պատասխանատվությունը: Համապատասխան դեպքերում հանցագործի և զոհի միջև հաշտեցման գործընթացը կարող է ծառայել զոհի ինքնորոշման հակամարտության կարգավորմանը և իրավական խաղաղության վերահաստատմանը: Այդ իսկ պատճառով՝ հաճախ դատախազությունը կամ ոստիկանությունն իրենք են խթանում այս գործընթացին: Սակայն այն չի պատկանում հիմնական քրեական վարույթին և անց է կացվում քրեական վարույթից դուրս: Դրա համար կան հատուկ վայրեր և հաստատությունները, որտեղ աշխատում են մասնագիտացված միջնորդներ:

Այլ տեղեկություններ հանցագործի և տուժողի միջև հաշտեցման ընթացակարգի և այն անցկացնող հաստատությունների վերաբերյալ կարող եք գտնել համացանցում, օրինակ՝ http://www.toa-servicebuero.de/konfliktschlichter կամ http://www.bag-toa.de/.

Բրոշյուրներ և հղումներ

Զոհերի պաշտպանության մասին տեղեկություններ կարող եք գտնել Արդարադատության և սպառողների պաշտպանության դաշնային նախարարության (BMJV) գլխավոր կայքում: Այնտեղ կգտնեք նաև հղումներ առանձին երկրամասերի (մոտակա զոհերի աջակցության կենտրոնների մասին տվյալներով) և հանցագործություններից տուժածների համար առցանց տվյալների բազայի (ODABS) կայքերի վրա. http://www.bmjv.de/opferschutz:

Այլ օգտակար տեղեկություններ կգտնեք հետևյալ բրոշյուրներում.

-<<Ուղեցույց զոհերի համար>>

-<<Ես ունեմ իրավունքներ>>

-<<Ավելի շատ պաշտպանություն տնային բռնությունից>>

-<<Խորհրդատվության և դատավարության ծախսերի օժանդակություն>>

(սույն կայքում *www.bmjv.de/publikationen*)

-<<Աջակցություն բռնության զոհերին>>

www.bmas.de/ (Փնտրման բառը. Hilfe für Opfer von Gewalttaten)

Հրատարակությունների պատվերները

Առցանց. www.bmjv.de

Փոստով. Publikationsversand der Bundesregierung,

Postfach 48 10 09, 18132 Rostock

Հեռախոս. (030) 18 272 272 1 Ֆաքս. (030) 18 10 272 272 1

Յուրաքանչյուրը կարող է հանցագործության զոհ դառնալ և աջակցության կարիք զգալ: Այդ իսկ պատճառով, մի հապաղեք և օգնություն ու խորհուրդ հարցրեք հետևյալ հաստատություններում:

Զոհերի ոստիկանական աջակցություն

Զոհերի ոստիկանական խորհրդատվական կենտրոնում հանցագործությունների և վթարների ու պատահարների զոհերն ու նրանց հրազատները կարող են ստանալ խորհրդատվություն և աջակցություն: Այլ տեղեկություններ կարող եք գտնել առցանց՝ հետևյալ կայքում **www.polizei.rlp.de/Opferschutz**.

Polizeipräsidium Koblenz Հեռախոս: 0261 - 103-2874, էլ.-փոստ: opferschutz.ppkoblenz@polizei.rlp.de	Polizeipräsidium Mainz Հեռախոս: 06131 - 65-3388, էլ.-փոստ: opferschutz.ppmainz@polizei.rlp.de
Polizeipräsidium Westpfalz, Kaiserslautern Հեռախոս: 0631 - 369-1404, էլ.-փոստ: opferschutz.ppwestpfalz@polizei.rlp.de	Polizeipräsidium Rheinpfalz, Ludwigshafen Հեռախոս: 0621 - 963-1154, էլ.-փոստ: opferschutz.pprheinpfalz@polizei.rlp.de
Polizeipräsidium Trier Հեռախոս: 0651 - 9779-1255, էլ.-փոստ: opferschutz.pptrier@polizei.rlp.de	

Արդարադատության աջակցության առաջարկները

Արդարադատության նախարարությունն այս կայքում www.jm.rlp.opferschutz.de տեղադրում է տարբեր տեղեկություններ հանցագործությունից տուժածների համար, ինչպես օրինակ՝

- Վկաների շփման կենտրոնները՝ դատարաններին կից
- Ռայնլանդ-Պֆալցի Զոհերի պաշտպանության հիմնադրամ
- Ադհեզիայի ընթացակարգը
- Հանցագործի և զոհի հաշտեցումը
- Վարույթի հոգեսոցիալական ուղեկցում

ԱՅԼ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկրամասի կառավարության կայքը՝ **www.opferschutz.rlp.de** ակնարկ է ներկայացնում Ռայնլանդ-Պֆալցի բազմաթիվ աջակցող կազմակերպությունների և խորհրդատվական կենտրոնների մասին: Այնեղ կարող եք գտնել շտապ օգնության համարներ, աջակցող առաջարկներ և տեղեկություններ, թե որտեղ կարող են հանցագործությունից տուժողները ստանալ մարդկային և ֆինանսական օժանդակություններ:

Աջակցություն կարող եք ստանալ նաև սույն հաստատություններում

- Վայսեր Ռինգ հանցագործության զոհերի միության աջակցության հեռախոսահամարը
  Հեռախոս: 116 006 , www.weisser-ring.de
- Բռնություն կանանց դեմ աջակցության հեռախոսահամարը
- Հեռախոս: 0800 116 016, www.hilfetelefon.de
- Ռայնլանդ-Պֆալցի վթարային ապահովագրություն վնասված առաջին և շտապ բուժօգնության աշխատակիցների համար

  Հեռախոս: 02632 960-0, www.ukrlp.de